

ПРОЯВЛЕНИЯ КУЛЬТОВ ЖИВОТНЫХ И РАСТЕНИЙ В АРМЕНИИ

П. А. Барсебян

В статье с точки зрения современного религиоведения и сравнительной мифологии представлены существующие свидетельства и проявления культов животных и растений в армянской действительности. Они являются проявлениями и поздними пережитками тотемизма. В статье представлены более известные проявления поклонения растений (чиннара, тополь, лекарственные травы и др.), животных и птиц (овца, коза, лев, ворон и др.) .

PERSONIFICATION OF THE WILDLIFE AND FLORAL WORSHIP IN ARMENIA

P. A. Barseghyan

The article represents the existing evidences on the worship of wildlife and flora from the viewpoint of the contemporary religious science and comparative mythology. Taking into account that they are manifestations and survivals of totemism of the late period the article shows the more vivid vestiges of the plant (ash tree, poplar and medical plants and others) and animal (sheep, goat, lion, crow and others) worship.

Կ. ՊՈԼՍԻ 381 Թ. ՏԻԵՉԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Ա. Գ. ՔԱԼԱՇՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մասնագիտական գրականության մեջ Կ. Պոլսի 381 թ. տիեզերական ժողովը բնութագրվում է որպես ուղղադավան երրորդաբանության վերջնական հաղթանակի վճռական հանգրվան: Եվ չնայած ժողովի ակնհայտ պատմական նշանակությանը՝ նրան վերաբերող բազմաթիվ հարցեր եկեղեցու և դոգմատիկայի պատմության շրջանակներում մինչ օրս վիճաբանական են համարվում: Նաև դա է պատճառը, որ ժողովի նկատմամբ աստվածաբանության, եկեղեցագիտության և դոգմատիկայի պատմության համակարգերում շրջանառվում են տարբեր մոտեցումներ: Եկեղեցական պատմագրությունը Կ. Պոլսի 381 թ. տիեզերական ժողովի նախապատրաստության ակունքներում մատնանշում է երկու հիմնական գործոն՝ Թեոդոսիոս Մեծ կայսեր¹ և նոր միլեականների, հատկապես կապադով-

¹ Թեոդոսիոս Մեծը 378-392 թթ. եղել է հռոմեական արևելքի կեսարը, իսկ 392-395 թթ.՝ Հռոմի վերջին միահեծան կայսրը: Նա սերել է իսպանական արիստոկրատական ընտանիքից: Այլքի է ընկել ռազմական ընդունակություններով, և Հռոմն ասպատակող բարբարոսներին ջախջախիչ պարտության մատնելուց հետո արևմտյան կեսար Գրատիանոսի (որի խորթ քրոջ ամուսինն էր) կողմից 378 թ. հաստատվել է իշխանակից և մահացած Վաղեսի փոխարեն նրան է տրվել կայսրության արևելյան հատվածի կեսարությունը (մանրամասները տես **Сократ Схоластик**. Церковная история. М., 1996, кн. IV, гл. 31, с. 200; кн. V, гл. 2, с. 208, հմմտ.՝ **Созомен Эрми́й Саламинский**. Церковная История. СПб, 1851, кн. VII, гл. 2, с. 476-478,

կիական աստվածաբանների գործունեությունը: Սակայն այդ գործում անուրանալի է նաև IV դարի 70-80-ական թվականների ներեկեղեցական հարաբերությունների դերը:

Դատելով սկզբնաղբյուրներից՝ 370-ական թվականների երկրորդ կեսին Հռոմեական կայսրության երկու հատվածներում էլ իրականացվել են մի շարք բարենորոգումներ՝ դադարեցվել են հալածանքները, իրենց նվիրապետական կենտրոններ վերադարձել աքսորված եպիսկոպոսները և այլն: Մնում էր կարգավորել նվիրապետական կենտրոնների նախկինում խաթարված կապերը և կանոնական տեսք տալ քրիստոնեական արևելքի և արևմուտքի հարաբերություններին: Սակայն նշված հիմնախնդիրների լուծումը դեռևս հեռու էր ցանկալիից, քանի որ կանոնական հարաբերությունների վերականգնմանը մեծապես խոչընդոտում էին ինչպես ներքին տարածայնություններն ու պառակտումները, այնպես էլ միմյանց դեմ ընդդիմությունն ու պայքարը: Իսկ այդ ամենը փաստում են, որ **IV դարի 70-ական թվականների երկրորդ կեսին ևս Հռոմեական կայսրությունում եկեղեցին չարունակում էր գործել հավատքային, կանոնական ու կարգապահական հակամարտության և մրցակցության պայմաններում**²:

Մասնագիտական գրականության արժեքային մոտեցումները տարանջատվում են նաև Կ. Պոլսի 381 թ. տիեզերական ժողովի այլ շարժառիթների լուսաբանության հարցում: Եկեղեցագետների և աստվածաբանների մի մասը, հիմք ընդունելով եկեղեցական պատմագրությունը, պնդում է, թե Կ. Պոլսի 381 թ. տի-

Փեոդորտ Եպիսկ. Կիրսկի. Церковная История. СПб., 1852, кн. V, гл. 5-6, с. 310-313): Թեսաղոնիկեի Ասխուլիոս եպիսկոպոսի կողմից մկրտվելուց հետո նա անցնում է Կ. Պոլիս, որտեղ ասպարեզից հեռացնում է տեղի «արիոսական եպիսկոպոս» Դեմոթիլին և Կ. Պոլսի նվիրապետ է հաստատում դարաշրջանի ականավոր հոգևոր գործիչ Գրիգոր Աստվածաբանին: Նրա իշխանության շրջանում Կ. Պոլսի նահատակ եպիսկոպոս Պողոսի աճյունը տեղափոխվում է մայրաքաղաք (մանրամասները տես՝ **Տոկրատ Տխոլաստիկ.** Церковная история, кн. V, гл. 6-7, с. 210-212, гл. 11, с. 216-217, հմմտ.՝ **Տոկրատ Քրիստի Տալամինսկի.** Церковная История, кн. VII, гл. 4-5, с. 479-482, гл. 10, с. 491-492; **Փեոդորտ Եպիսկ. Կիրսկի.** Церковная История, кн. V, гл. 8, с. 314): Թեոդոսիոսի կրոնական քաղաքականության մասին են վկայում նրա մի քանի հրովարտականները, որոնցով արգելվել է հեթանոսական սրբավայրերի գործունեությունը, հալածվել են արիոսականներն ու այլ հերձվածները, բարեկարգություններ են իրականացվել Հռոմում: Ներքին խռովությունների և գահակալական պատերազմների ժամանակ նա պաշտպանել է Գրատիանոսի և Վադենտինիանոս կրտսերի շահերը և մահապատժի է ենթարկել Մաքսիմոս և Եվգենիոս բռնավորներին (մանրամասները տես՝ **Տոկրատ Տխոլաստիկ.** Церковная история, кн. V, гл. 14, с. 218-219, гл. 18, с. 222-223, гл. 25, с. 235-236, հմմտ.՝ **Տոկրատ Քրիստի Տալամինսկի.** Церковная История, кн. VII, гл. 13, с. 497-499, гл. 22, с. 524-526, гл. 24, с. 528-530; **Փեոդորտ Եպիսկ. Կիրսկի.** Церковная История, кн. V, гл. 12-15, с. 330-332, гл. 17-18, с. 334-341, гл. 21-22, с. 345-350, гл. 24, с. 353-357): 395 թ. Թեոդոսիոսը հաղթանակած մտնում է Հռոմ, որտեղ էլ մահանում է: Նրա մահվանից հետո կայսրությունը բաժանվել է երկու հատվածի: Արևմտահռոմեական հատվածում կայսր է հռչակվել Թեոդոսիոս Մեծի կրտսեր որդի Հոնորիոսը, իսկ Արևելահռոմեական կայսրությունում՝ Արկադիոս որդին (մանրամասները տես՝ **Տոկրատ Տխոլաստիկ.** Церковная история, кн. V, гл. 26, с. 236; հմմտ.՝ **Տոկրատ Քրիստի Տալամինսկի.** Церковная История, кн. VII, гл. 29, с. 541-542, кн. VIII, гл. 1, с. 543-546; **Փեոդորտ Եպիսկ. Կիրսկի.** Церковная История, кн. V, гл. 25-27, с. 357-359):

² Այդ մասին մանրամասները տես՝ **Տոկրատ Տխոլաստիկ.** Церковная история, кн. V, гл. 3, с. 208-209.

եզերական ժողովը հրավիրվել է ընդդեմ հոգեմարտների (մակեդոնականների)³: Բնական է, որ **ցանկացած տիեզերական ժողովի աշխատանքային ծրագրի հիմքում առաջին հերթին ընկած է հավատքային գործոնը**, և ընդհանրական այդ օրինաչափությունը բնորոշ է նաև **Կ. Պոլսի ժողովին**: Սակայն անառարկելի է նաև այն, որ ժողովի հիմքում ընկած են եղել հասարակական և քաղաքական գործոններ: Այդ պնդումը կարելի է հիմնավորել Թեոդոսիոս կայսեր «կրոնաքաղաքական ծրագրի»՝ 380 թ. կրոնական հրովարտակի («Չավատքի մանիֆեստի»)՝⁴ համակողմանի արժևորմամբ: Չնայած իր ընդգծված եկեղեցանպաստ ուղղվածությանը՝ «Մանիֆեստը» **նոր հակամարտության դուռ է բացել քրիստոնեական արևելքի և արևմուտքի միջև**: Պատճառն այն էր, որ հրովարտակը հանդիսացել է «արևմտյան հավատքի կանոններն» Արևելքին պարտադրելու արմատական փորձ⁵: Այդ համատեքստում պետք է կարևորել այն, որ «**Մանիֆեստը**»՝ **նիկեականներից բացի, աստվածաբանական մյուս բոլոր հոսանքներին զրկել է ուղղադավան (կաթողիկե) կոչվելու իրավունքից**: Բայց չի կարելի նաև չնկատել, որ արևմտյան «երրորդաբանական կոպիտ ըմբռնում-

³ Այս մոտեցման հիմքում ընկած է Եվագրիոսի եկեղեցական պատմությունը, որտեղ արձանագրված է, թե տիեզերաժողովի հրավիրման շարժառիթ են եղել մակեդոնականները, տես *Евагриу Схоластик*. Церковная история. М., 1999, кн. I, гл. I, с. 97:

⁴ Այդ տեսանկյունից բնութագրական է Ա. Սպասկու տեսակետը, որը գրում է, թե մինչև Թեոդոսիոս Սեծի շրջանը կայսրերը դոգմատիկական կուսակցությունների դեմ պայքարել են եկեղեցական միջոցներով, որ կայսրերի «... կրոնական քաղաքականությունը հենվել է եկեղեցական մեծամասնության տրամադրության վրա, և եթե նրանց ծայրը խիստ էր հնչում, ապա միայն այն դեպքերում, երբ կայսրերն առնչվում էին այնպիսի հակազդեցության, որն ուղղակի թվում էր կայսերական իշխանությանը ենթարկվելու հրաժարում: Ճիշտ է, նրանց իշխանության շրջանում եպիսկոպոսները երբեմն մեծ խմբերով աքսորվել են, բայց դա երբեք պատճառ չի դարձել աքսորվածներին քաղաքացիական որևէ իրավունքից զրկելու, և այդ աքսորները պայմանավորված էին ոչ այնքան կայսեր, որքան հիմնականում ժողովական ձևով հանդես եկող առավել կամ պակաս համախմբված եպիսկոպոսների կամքով: *Չանձին Թեոդոսիոսի՝ վերածնվեց հին հեթանոսական pontifex maximus-ը, որն իր ձեռքում կենտրոնացրեց sacerdotium-ը և imperium-ը: Քրիստոնեության պատմության մեջ առաջին անգամ հավատքի դոգմատիկական դրույթները պետական օրենսդրության առարկա դարձան, ներառվեցին քաղաքացիական իրավունքի կողքսում, և ուղղադավանների ու հերձվածների միջև իրականացվեց նախկինում գոյություն չունեցող քաղաքական բաժանում (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)*», *Спасский А.* История догматических движений в эпоху Вселенских Соборов (в связи с философскими учениями того времени). Тринитарный вопрос (История учения о св. Троице). Сергиев Посад, 1914, с. 564-565.

⁵ Թեոդոսիոսի հրովարտակը հռչակում է. «Ցանկանում ենք, որպեսզի մեր ողորմածությամբ ղեկավարվող բոլոր ազգերը հետևեն այն կրոնին, որն աստվածային Պետրոսը տվել է հռոմեացիներին, ... և որի դավանանքով փառաբանվում են նախամեծար հոգևորականներ Դամասիոսը և առաքելական սրբության Պետրոսը, Ալեքսանդրիայի եպիսկոպոսը, որպեսզի մենք բոլորն առաքելական կարգի և ավետարանական ուսմունքի համաձայն հավատանք մեկ՝ Յոր, Որդու և Ս. Հոգու Աստվածությանը, նրանց հավասար մեծությանը և արժանապատիվ երրորդությանը: ... Այդ օրերին հնազանդ քրիստոնյաներին պատվիրում ենք կրել ուղղադավան անունը: Չանդուզն ու անմիտ մյուսներին դատապարտում ենք կրելու հերետիկոսական ուսմունքի անարգանքը: Եվ նրանք կդատապարտվեն ոչ միայն աստվածային պատժով, այլև երկնային ներշնչանքով ընդունված մեր կամքով», *Codex Theodosianus*. Lib. XVI, col. I, p. 2.

ների վրա» հենված «Մանիֆեստն» արևելցիների համար լրացուցիչ մեկնաբանությունների կարիք է ունեցել: Եվ դա է պատճառը, որ արևելյան եպիսկոպոսների ազդեցիկ հատվածը ձեռնամուխ է եղել եկեղեցական բանաձևում և կանոնական տեսք տալ «Մանիֆեստին», ինչն էլ դարձել է ժողովի պատճառներից մեկը:

4. Պոլսի 381 թ. տիեզերական ժողովի քննարկումներն ընթացել են մայիս-հունիս ամիսներին, որին մասնակցել են արևելյան եկեղեցու 186 եպիսկոպոսներ⁶: ժողովի գործքի վերաբերյալ մեզ հասած աղքատիկ տեղեկությունների համաձայն՝ «եկեղեցական գործերը կարգավորելուց զատ», 4. Պոլսի տիեզերա-ժողովը վերահաստատել է նիկեական հանգանակը⁷, որը **պատմությանը հայտնի է Նիկեա-Կոստանդնուպոլսյան Հավատո Հանգանակ անունով** և կանոնական նոր որոշումներ է ընդունել:

Հավաստի է նաև այն, որ ժողովում դավանաբանական որոշումներ ընդունելուն նախորդել են աստվածաբանական քննարկումները: Դա կարելի է փաստել հատկապես նիկեականների և մակեդոնականների վիճաբանությունների մասին եկեղեցական պատմագրության պահպանված տեղեկություններով⁸: Այդ վիճաբանություններն ունեցել են իրենց նախապատմությունը: Հիշատակություններ են պահպանվել այն մասին, որ համանմանական երրորդաբանների արմատա-

⁶ 4. Պոլսի 381 թ. տիեզերական (երբեմն այն կոչում են նաև «համաարևելյան») ժողովի աշխատանքներին մասնակցել են բացառապես հռոմեական արևելքի՝ 4. Պոլսի, Եգիպտոսի, Պաղեստինի, Փյունիկեի, Ասորիքի, Արաբիայի, Բոստրիայի, Օսրոնեի, Միջագետքի, Եփրատի կայսերական հատվածի, Կիլիկիայի, Կապադովկիայի, Փոքր Հայքի, Իսավրիայի, Կիպրոսի, Պամփյուլիայի, Լիկաոնիայի, Պիսիդիայի, Լիկիայի, Փռյուզիայի, Կարիական մարզի, Բյուբանիայի, Պոնտա-Ամասիական շրջանի, Միզիայի, Սկյուֆիայի, Պոնտա-Պոլեմոնիական և Իսպանական (փաստերով հաստատված չէ) մարզերի եպիսկոպոսները (տես *Деяния Вселенских Соборовъ*. Т. I, с. 120-123): Սակայն և՛ արևմտյան (Դիոնիսիոս Կրտսերի և Պրիսկի կաթոլիկյան ժողովածուներ, Տիեզերաժողովների Գործք, մանրամասները տես *Sacrorum conciliorum nova amplissima collectio* (ed. by J.-D. Mansi). Florens, 1786, T. III, p. 568-571), և՛ արևելյան աղբյուրներում (Միքայել Ասորու ժամանակագրություն, թարգմանական Տիեզերաժողովների Գործք և այլն) հիշատակվում է ժողովական որոշումներն ստորագրած 147 եպիսկոպոսի (կամ նրանց փոխարինած քահանաների) անուն: Ընդ որում, պահպանվել է նաև Մելետիոս Անտիոքացու անունը, որը մահացել էր ժողովական քննարկումների ընթացքում, և բացակայում է Բարսեղ Մեծի երկրորդ եղբոր՝ Պետրոս Սեբաստացու անունը:

⁷ Սոկրատես պատմիչն, օրինակ, գրում է, որ ժողովի ուղղադավան հայրերը «կրկին հաստատեցին նիկեական հանգանակը» (*Сократ Схоластик*. Церковная история, кн. V, гл. 8, с. 213): Սոզոմենոսը փաստում է լոկ այն, թե տիեզերական ժողովի կողմից սահմանվել է, որ «նիկեական ժողովի հավատը տիրապետող պետք է հանդիսանա, իսկ բոլոր հերետիկոսությունները պետք է արգելվեն» (*Созомен Эрмиу Саламинский*. Церковная История, кн. VII, гл. 9, с. 489): Էլ ավելի լակոնիկ է թեոդորետը, որը գրում է, թե 4. Պոլսի եպիսկոպոսի ընտրությունից հետո «ժողովական հայրերը եկեղեցական բարեկարգության կանոններ հաստատելուց հետո հաստատեցին նիկեական հանգանակի անվիճարկելիությունը» (*Феодорит еписк. Кирский*. Церковная История, кн. V, гл. 8, с. 316):

⁸ Հակաարիոսական պայքարի նախկին համախոհների, մասնավորապես նոր նիկեականների և հոգեմարտների (Էլևսիոս Կիզիկեացի, Մարկիանոս Լամպսակեցի) միջև ծավալված վիճաբանությունների և դրանց շուրջ 4. Պոլսի տիեզերական ժողովի քննարկումների մանրամասները տես *Sacrorum conciliorum nova amplissima collectio* (ed. by J.-D. Mansi), T. III, p. 568-571; *Сократ Схоластик*. Церковная история, кн. V, гл. 8, с. 212; *Созомен Эрмиу Саламинский*. Церковная История, кн. VII, гл. 7, с. 485-486:

կան մի հատվածը, հրաժարվելով նիկեականությունից, վերադարձել է Չայր և Որդի Աստծու համանմանության դավանանքին: Պառակտունը հաղթահարելու նպատակով կայսրը Կ. Պոլսի տիեզերաժողով է հրավիրել նաև մակեդոնական 36 եպիսկոպոսների, որոնք, սակայն, հիմնովին մերժելով համերաշխության բոլոր առաջարկները, լքել են ժողովը⁹:

Ինչ վերաբերում է հակաերրորդաբանական հերձվածներին, ապա այդ հարցի քննարկումը ուղղակի բխել է Թեոդոսիոսի «Սանիֆեստից»: Ցավոք, սկզբնաղբյուրների բացարձակ լռությունը թույլ է տալիս միայն ենթադրություններ անել այդ քննարկումների ուղղվածության մասին: Եվ քանի որ տիեզերական ժողովի 1-ին կանոնը պահպանել է բանադրված հակաերրորդաբանական հոսանքների անունները, ապա կարելի է ենթադրել, որ այդ գործում քննարկման նյութ են հանդիսացել Չայր, Որդի և Սուրբ Հոգի Աստծու համագոյությունը մերժած բոլոր դոգմատիկական հոսանքները: Ընդ որում, դատելով Կ. Պոլսի 382 թ. սինոդական ժողովի նյութերից և Հռոմի Դամասիոս եպիսկոպոսին հղված արևելյան եպիսկոպոսների ուղերձից, հակաերրորդաբանական այդ հերձվածները բանադրվել են նախ այն պատճառով, որ իրենց դոգմատիկական լուծումներում մերժել են Ս. Երրորդության անձերի իսկությունը (կամ Երրորդության անձերը միաձուլել են մեկի մեջ, ինչպես սաբելականները, մարկելականները, փոտականները), ապա նաև այն պատճառով, որ առաջադրվել են երրորդաբանական այնպիսի համակարգեր, որոնցում Ս. Երրորդության անձերն օտարվել են իրարից, և նրանց այլ էություն կամ ժամանակային հաջորդականություն է վերագրվել (ինչպես Պողոս Սամոսատցին, Արիոսը և արիոսականները, անոմեականները, եվդոքսիականները, եվնոմեականները, օմիականները, ապոլինարականները և այլն)¹⁰:

Տիեզերաժողովի հավատքային անանց հուշարձանն է համարվում նորահաստատ Չավատո Հանգանակը: Եվ այդուհանդերձ մինչ օրս վիճաբանական են համարվում վերջինիս հետ կապված առանցքային մի շարք հիմնահարցեր¹¹: Հնարավորություն չունենալով խորանալ մանրամասների մեջ՝ մատնանշենք միայն, որ Կ. Պոլսի Հանգանակի վավերականության վերաբերյալ մասնագիտա-

⁹ Սակեդոնականների բանադրության մասին տես Կ. Պոլսի տիեզերական ժողովի առաջին կանոնը (*Дяенія Вселенскихъ Соборвъ*. Т. I, с. 69-70):

¹⁰ Տես *Дяенія Вселенскихъ Соборовъ*. Т. I, с. 116, 125-126: Արևելյան եպիսկոպոսներին հղված Հռոմի ժողովի որոշումների և Դամասիոս քահանայապետի ուղերձների մասին տես նաև *Феоdorfит еписк. Курскій*. Церковная История, кн. V, гл. 9, с. 320-321.

¹¹ Բողոքական աստվածաբաններից և եկեղեցագետներից ոմանք պնդում են, թե Կ. Պոլսի Հանգանակը նիկեականի նոր խմբագրությունն է, որը ժողովի հանձնարարությամբ կատարել է Գրիգոր Նյուսացին: Ա. Հառնակը, մերժելով այդ մոտեցումը, հիմնավորում է, որ հանձին Կ. Պոլսի Հանգանակի՝ առնչվում ենք նոր դավանաբանական փաստաթղթի: Այդ կապակցությամբ նա գրում է. «Կ. Պոլսի Հանգանակը պարունակում է 178 բառ, որոնցից միայն 33-ն են հանընկնում նիկեական տեքստին, նիկեական տեքստի հետ համեմատած, այստեղ առկա են 4 բացթողում, 5 ոճական փոփոխություն և 10 հավելում»: Նա նաև պնդում է, որ Կ. Պոլսի Հանգանակը որքանով որ կարելի է անվանել նիկեական հանգանակի վերամշակած տարբերակ, նույնքան էլ կարելի է որակել իբրև միանգամայն նոր դավանաբանական տեքստ, տես *Harnack A. Lehrbuch der Dogmengeschichte*. Bd. II, Tubingen, 1931, S. 276:

կան գրականության մեջ շրջանառվող տեսակետները կարելի է խմբավորել 4 հիմնական խմբերում¹²:

Դրանցից առաջինը աստվածաբանական և եկեղեցագիտական վերլուծական գրականության մեջ գերիշխող այն տեսակետն է, թե Կ. Պոլսի տիեզերական ժողովում որևէ նոր Հանգանակ չի հաստատվել, այլ պարզապես վերահաստատվել է նիկեականը¹³: Երկրորդ տեսակետի կողմնակիցները փորձել են հիմնավորել, որ Կ. Պոլսի տիեզերաժողովին վերագրվող Հանգանակը Կյուրեղ Երուսաղեմացու կողմից ժողովին ներկայացված Երուսաղեմի մկրտության հանգանակն է, որի զոյության մասին Եպիփան Կիպրացին հիշատակել է դեռևս 373 թ.¹⁴: Հաջորդ հիմնական տեսակետը համախմբում է այն հեղինակներին, որոնց համոզմամբ Կ. Պոլսի տիեզերաժողովին վերագրվող դավանաբանական բանաձևը նախապես հայտնի չի եղել եկեղեցում, միայն Քաղկեդոնի 451 թ. ժողովից հետո է սկսել կոչվել «150 հայրերի հավատք» և հետին թվով վերագրվել Կ. Պոլսի 381 թ. տիեզերաժողովին¹⁵: Ըստ էության այդ տեսակետին մասնակիորեն աղերսվում է մոտեցումների վերջին խումբը, որը մերժում է Կ. Պոլսի հանգանակի վավերա-

¹² Խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ եկեղեցագիտության մեջ վիճարկվող տեսակետների ընդհանրացված մանրամասները տե՛ս նաև **Hefele C.-J.** Conciliengeschichte. Bd. I, Zweite Auflage. Freiburg, 1873, S. 282-288 և այլն:

¹³ Այս տեսակետի կողմնակիցներն իրենց եզրահանգումը փաստում են ժողովական եպիսկոպոսների կողմից Թեոդոսիոս կայսրին հղված ուղերձով, որտեղ հավաստվում է, որ ժողովականները «վերահաստատել են փոխադարձ համաձայնությունը և Նիկեայում հաստատված հայրերի հավատքը», տե՛ս Sacrorum conciliorum nova amplissima collectio (ed. by J.-D. Mansi), T. III, p. 558: Հմմտ. Деяния Вселенских Соборовъ . Т. I, с. 116: Այդ մոտեցման պաշտպանությամբ հանդես են գալիս նաև բազմաթիվ աստվածաբաններ և եկեղեցագետներ, տե՛ս, օրինակ, **Болотов В. В.** Лекции по истории Древней Церкви, Т. 4, с. 115; **Поснов М. Э.** История Христианской Церкви (до разделения Церквей – 1054 г.), с. 369; **Спасский А.** История догматических движений в эпоху Вселенских Соборов (В связи с философскому учению того времени). Тринитарный вопрос (История учения о св. Троице), с. 584; **Frend W.H.C.** The Early Church (From the beginnings to 461), p. 176; **Schaff Ph.** History of the Christian Church, V. 3, p. 928; **Swete H. B.** The Holy Spirit in the ancient Church, p.231; **Wand J.W.C.** A history of the Early Church(to A.D. 500), p.7, 186; և այլն:

¹⁴ Կյուրեղ Երուսաղեմացուն վերագրվող հանգանակի մասին տե՛ս Գիրք Թղթոց, Երուսաղեմ, 1994, էջ 604-605, Կնիք Հաւատոյ ..., Անթիլիաս, 1998, էջ 29-31: Այդ տեսակետն են պաշտպանում Ս.-Ժ. Հեֆելեն (տե՛ս **Hefele C.-J.** Conciliengeschichte. Bd. II, Zweite Auflage, S. 11-12, 37), Ի. Չելցովը (տե՛ս **Чельцов И. В.** Древняя формы Символа, с. 65-67) և շատ ուրիշներ: Ժ. Կունցը պնդում է, որ Եպիփանեսի (Կ. Պոլսի) Հանգանակը Նեկտարիոս պատրիարքի մկրտության հանգանակն է, որը նա 383 թ. ներկայացրել է Թեոդոսիոս կայսրին, և որը վերջնական տեսք է ստացել Կ. Պոլսի տիեզերաժողովի կողմից, այսինքն՝ «լուսավորված է 150 հայրերի ճառագայթներով» (տե՛ս **Kunze J.** Merkus Eremita, ein neuer Zeuge fur altchristliche Taufbekenntniss. Leipzig, 1895, S. 173, տե՛ս նաև **Kunze J.** Das nicanich-konstantinopolitanische Symbol. Leipzig, 1898, S. 35): Իսկ Ա. Հահնը եկեղեցական պատմագրության քննական վերլուծության հիման վրա պնդում է, որ Եպիփանեսի վերագրվող հանգանակի նախնական բնագիրը եղել է Նիկեական հանգանակը (տե՛ս **Hahn.** Bibliothek der Symbol, S. 140, 144-145, 160-161):

¹⁵ Տեսակետի կողմնակիցների փաստական հիմքը Քաղկեդոնի ժողովի IV նիստում ընթերցած ակտերն են, որոնցում հռչակվում է. «Տիեզերական սուրբ և երանելի ժողովը բովանդակում է Նիկեայում 318 (հայրերի) կողմից հաստատված հավատքի կանոնը և հետևում է

կանությունը¹⁶:

Եվ չնայած կարծիքների այդ բազմազանությանը՝ եկեղեցական ավանդու-
թյունն անվերապահորեն հավաստում է, որ Կ. Պոլսի 381 թ. տիեզերական ժողո-
վի կողմից հաստատված հանգանակը հանդիսացել է ժամանակաշրջանի աստ-
վածաբանական որոնումների օրինաչափ արդյունքը և իր դոգմատիկական լու-
ծումներով դարձել է Նիկեականի վերահաստատումը և օրգանական լրացումը:

Այդ եզրահանգումը գնահատելու միտումով անդրադառնանք զույգ Հանգա-
նակների համեմատականին.

Նիկեական հանգանակ¹⁷

«Հավատում ենք մի Աստծո՝ ամենակալ
Հորը, ամենայն երևելիների և աներևույթների
արարչին: Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսի՝
Աստծու Որդուն՝ ծնված Հայր Աստծուց Միա-
ծին, այսինքն Հոր էությունից, Աստված՝ Աստ-
ծուց, Լույս՝ Լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշ-
մարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած, հա-
մագոյակից Հորը, որով ամենայն ինչ եղավ
երկնքում և երկրի վրա: Որ մեզ՝ մարդկանց և
մեր փրկության համար երկնքից իջնելով
մարմնացավ և մարդացավ, չարչարվեց [մա-
հացավ] և երրորդ օրը հարություն առավ և
գալու է դատելու կենդանիներին և մեռյալնե-
րին: Հավատում ենք և Սուրբ Հոգուն: Իսկ ու-
թեր ասում են, թե կար ժամանակ, երբ (Որ-
դին) չկար, որ Նա մինչև ծնունդ գոյություն
չունեն, կամ թե Որդին ոչնչից (ոչէից) եղավ,

Կոստանդնուպոլսյան հանգանակ¹⁸

Հավատում ենք մի Աստծո՝ ամենակալ Հո-
րը, երկնքի և երկրի, երևելիների և աներևույթ-
ների Արարչին: Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսի՝
Աստծու Որդուն՝ բոլոր դարերից առաջ ծնված
Հայր Աստծուց՝ միածին, Լույս Լույսից, ճշմա-
րիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և
ոչ՝ արարած: Համագոյակից Հորը, որով ամե-
նայն ինչ եղավ: Որ մեզ՝ մարդկանց համար և
մեր փրկության համար, երկնքից իջնելով,
Կույս Մարիամից մարմնացավ և մարդացավ
Սուրբ Հոգով: Որ մեզ համար խաչվեց Պոն-
տացի Պիղատոսի օրոք, չարչարվեց և թաղ-
վեց, ըստ գրվածքի երրորդ օրը հարություն
առավ, ելավ երկինք և նստեց Հոր աջ կող-
մում: Եվ փառքով գալու է նորից՝ դատելու
կենդանիներին և մեռյալներին, ում թագավո-
րությունը վախճան չունի: Հավատում ենք և

(որանց) երանելի հիշատակի արժանի Թեոդոսիոս Մեծի օրոք Կոստանդնուպոլսում հավաք-
ված 150 (հայրերի) ժողովի հաստատած այդ հավատամքին», տե՛ս *Дянія Вселенскихъ Со-
боровъ. Т. III / IV Соброръ (часть вторая), V Соброръ. СПб., 1996, с. 7*: Ընդ որում, այդ հա-
վաստումը Քաղկեդոնի նշված նիստում կրկնվում է բազմիցս, տե՛ս նույն տեղում, էջ 8-23:

¹⁶ Նշված տեսակետի պաշտպանությամբ հանդես են գալիս հանգանակային գրականու-
թյան ճանաչված մասնագետներ Թիլմոնը (տե՛ս *Tillemont, Memories, T. IX, p. 222, art. 78*),
Կասպարին (տե՛ս *Caspary G. Quellen zur Geschichte d. Tautsymbols. T. 1, S. 73*), Ա. Հորտը
(տե՛ս *Hort A. Two dissertation. Cambrigde and London, 1871, p. 73-115*) և ուրիշներ: Սակայն
պետք է նշել, որ այս տեսակետի առավել ամբողջական հայեցակարգային մոտեցումը
մշակվել է ականավոր աստվածաբան Ա. Հառնակի կողմից, որը պնդում է, թե Կ. Պոլսի ժողովը
նման հանգանակ չի կազմել և չէր էլ կարող կազմել (մանրամասները տե՛ս *Harnak A. Konstantinopolishes Simbol (art.) / Real-Encyclopaedie fur protestantische Theologie and Kieche. T. XI, Leipzig, 1882, S. 12-28*): Տեսական առումով բավականին հետաքրքրական է խնդրո
առարկա հիմնահարցի վերաբերյալ Ե. Տեր-Մինասյանի մոտեցումը: Համարելով, որ 381 թ. Կ.
Պոլսի ժողովը «արևելյան ժողով է, որին սխալմամբ տրվել է Բ տիեզերական ժողով
անվանումը»՝ նա միաժամանակ, պնդում է, թե այդ ժողովում է «... վերանորոգում Նիկիայի
հանգանակը, որովհետև ժողովականները չեն կամենում նոր հանգանակ կազմած լինել»,
տե՛ս *Երուանդ վրդ. Տեր-Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա, Հին
եկեղեցին, Ս. Էջմիածին», 1908, էջ 273*:

¹⁷ *Дянія Вселенскихъ Соброръ, Т. I, с. 69-70.*

¹⁸ Նույն տեղում, էջ 130:

կամ այլ Հորից է կամ բնությունից, կամ որ նա ստեղծված է կամ փոփոխելի կամ այլայլելի, այդպիսիներին կաթողիկե և առաքելական եկեղեցին ճշգրտում է»:

Հայր Աստուծոց բխող Սուրբ Հոգի Աստծուն, Կենարարին, Հայր և Որդի Աստծո Փառակցին, որ խոսեց Մարգարեների միջոցով: Հավատում ենք նաև Սի, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական Եկեղեցուն, մի մկրտության, մեղքերի թողության: Ակնկալում ենք մեռյալների հարությունը և հավիտենական կյանքը: Ամէ՛ն:

Բնագրային վերլուծությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ նիկեականի համեմատությամբ Կ. Պոլսի հանգանակում տեղ են գտել աստվածաբանական մի շարք լրանջակումներ: Երկու հանգանակում նույնական է Հայր Աստծու անսկիզբ ու անժամանակ էության հաստատումը և Հայր և Որդի Աստծու անժամանակային պատճառականության բանաձևումը, ուր ելակետային է համարվում Որդի Աստծու Միածին՝ այսինքն՝ Հայր Աստծու էությունից ծնված լինելը: Այլ կերպ ասած՝ երկու հանգանակում էլ **Հայր, Որդի (և Սուրբ Հոգի) Աստված համարվում են միաստվածություն, մի տերություն և մի զորություն**: Կ. Պոլսի հանգանակում ևս բանաձևվում է քրիստոսաբանական միևնույն վարդապետությունը, այն է՝ Որդի Աստված անպատճառական ու անժամանակային Աստված է: Հաստատվում է նաև այն, որ Աստված Բանն իրապես անձնավորվել է (մարմացել է և մարդացել), և իր աստվածային բնությանն անխառն, անշփոթ և անայլայլելի միավորել է մարդկային բնությունը՝ իրական դարձնելով փրկագործության իսկությունը: Նիկեականի համեմատությամբ միանգամայն նոր շարադրանքով է ներկայացվում Ս. Հոգու բաժինը՝ Ս. Հոգու աստվածային անճառելի բնությունն ու էությունը: Այսքանով էլ սահմանափակվում է Նիկեական և Կ.Պոլսի Հանգանակների բովանդակային նույնությունը:

Սակայն չի կարելի աչքաթող անել նաև նշված հանգանակների միջև առկա որոշակի տարբերությունները: Մասնավորապես հավատքային սկզբունքային նշանակություն ունեցող «Հոր էությունից» նիկեական մեկնությունը փոխարինվել է «Աստծո Որդուն» բոլոր դարերից առաջ ծնված Հայր Աստծուց՝ միածին» մեկնաբանությամբ¹⁹: Հանգանակային գրականության մեջ հիմնավորվում է նաև այն, որ այս Հավատամքը շատ բանով հիշեցնում է IV դարի երկրորդ կեսերի Մելետիոս Անտիոքացու (անտիոքյան) և Եվսեբիոս Սամոսատցու (միջագետքյան) հանգանակները²⁰, և որ ուղղադավանության առումով նիկեական

¹⁹ Թերևս այդ փոփոխության պատճառների լավագույն բացատրությունը կարելի է համարել Ա. Լեբեդևի տեսակետը, որը գրում է. «Ի՞նչ ազդեցությամբ է իրականացել Կոստանդնուպոլսյան Հանգանակ կազմելը: Ալեքսանդրիական ազդեցությամբ թե՞ անտիոքյան: Առանց մտածելու պատասխանում ենք. *անտիոքյան ուղղության ազդեցությամբ* (ընդգծումը մերն է՝ Ա. Բ.)» (*Лебедев А. П.* Вселенские Соборы IV и V вековъ (Обзор ихъ догматической деятельности въ связи съ направлениемъ школъ александрійскоу и антioxiйскоу), с. 138): Նոր Հանգանակ կազմելու միտքն առաջին հերթին անտիոքյան է, քանի որ ալեքսանդրիացիների և նրանց համախոհների համար նիկեական հանգանակը բոլոր ժամանակներում համարվել է անփոփոխ: Այլ էր անտիոքացիների մոտեցումը, որոնք նիկեական հանգանակն ամենևին էլ «վերջին խոսք» չէին համարում և տասնամյակներ շարունակ վիճարկում էին նիկեական հիշյալ դրույթը (մանրամասները տե՛ս նույն տեղում, էջ 138-141):

²⁰ Անտիոքյան և միջագետքյան հանգանակների մանրամասները տե՛ս *Hort A.* Two dissertations, p. 128, 131-132.

հանգանակին առավելագույնս մերժ է նույն դարաշրջանով թվագրվող Հայ եկեղեցու հանգանակը²¹:

²¹ Հայ եկեղեցու հանգանակի ուղղադավանության փաստն են արձանագրում բազմաթիվ հեղինակներ, տես **Спасский А.** История догматических движений в эпоху Вселенских Соборов (В связи с философскими учениями того времени). Тринитарный вопрос (История учения о св. Троице), с. 608; **Hahn.** Bibliothek der Symbol, S. 151; **Hort A.** Two dissertation, p. 119 և այլն: Այդ իրողությունը կարելի է փաստել նաև նիկեական, Հայ եկեղեցու և Կ. Պոլսի հանգանակների համեմատականի հիման վրա (չեղագրով նշված են նիկեականի հետ առկա տարբերությունները, որոնք կարող են բաղդատվել նաև Կ. Պոլսի հանգանակի համապատասխան փոփոխություններին):

Նիկեական հանգանակ

«Հավատում ենք մի Աստծո՝ ամենապապի Հորը, ամենայն երևելիների և աներևույթների արարչին: Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն՝ ծնված Հայր Աստծուց Միածին, այսինքն Հոր էությունից, Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած, համագոյակից Հորը, որով ամենայն ինչ եղավ երկնքում և երկրի վրա: Որ մեզ՝ մարդկանց և մեր փրկության համար երկնքից իջնելով մարմնացավ և մարդացավ, չարչարվեց [մահացավ] և երրորդ օրը հարություն առավ և գալու է դատելու կենդանիներին և մեռյալներին: Հավատում ենք և Սուրբ Հոգուն: Իսկ ովքեր ասում են, թե կար ժամանակ, երբ (Որդին) չկար, որ ևս մինչև ծնունդ գոյություն չունեն, կամ թե Որդին ոչնչից (ոչէից) եղավ, կամ այլ Հորից է կամ բնությունից, կամ որ նա ստեղծված է կամ փոփոխելի կամ այլայլելի, այդպիսիներին կաթողիկե և առաքելական եկեղեցին նզովում է»:

Հայ եկեղեցու հանգանակ

Հավատում ենք մի Աստծո՝ ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչին: Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն՝ ծնված Հայր Աստծուց՝ միածին, այսինքն՝ Հոր էությունից: Աստված՝ Աստծուց, Լույս Լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ՝ արարած: *Նույն ինքը Հոր բնությունից*, որով ամենայն ինչ եղավ երկնքում և երկրի վրա: Որ մեզ՝ մարդկանց *համար* և մեր փրկության համար, երկնքից իջնելով մարմնացավ, մարդացավ, Սուրբ Հոգով կատարելապես *ծնվեց սուրբ Կույս Մարիամից: Որով վերջրեց մարմինը, հոգին և միտքը և ամենայն ինչ, որ ունի մարդ՝ ճշմարտապես և ոչ կարծեք: Չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով ելավ երկնք և նստեց Հոր աջ կողմում: Գալու է նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու կենդանիներին և մեռյալներին, ում թագավորությունը վախճան չունի: Հավատում ենք և Սուրբ Հոգուն՝ *անեղին և կատարյալին, որ խոսեց Օրենքում, Մարգարեներում և Ավետարաններում: Որ իջավ Հորդանան, քարոզեց առաքյալների միջոցով և բնակվեց սուրբերի մեջ: Հավատում ենք նաև միայն Մի, Ընդհանրական, Առաքելական և Սուրբ եկեղեցու, մի մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության: Մեռյալների հարությանը, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանին, երկնքի Արքայությանը և հավիտենական կյանքին:**

Կոստանդնուպոլսյան հանգանակ

Հավատում ենք մի Աստծո՝ ամենակալ Հորը, երկնքի և երկրի, երևելիների և աներևույթների Արարչին: Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն՝ բոլոր դարերից առաջ ծնված Հայր Աստծուց՝ միածին, Լույս Լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ՝ արարած: Համագոյակից Հորը, որով ամենայն ինչ եղավ: Որ մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության համար, երկնքից իջնելով, Կույս Մարիամից մարմնացավ և մարդացավ Սուրբ Հոգով: Որ մեզ համար խաչվեց Պոնտացի Պիղատոսի օրոք, չարչարվեց և թաղվեց, ըստ գրվածքի երրորդ օրը հարություն առավ, ելավ երկնք և նստեց Հոր աջ կողմում: Եվ փառքով գալու է նորից՝ դատելու կենդանիներին և մեռյալներին, ում թագավորությունը վախճան չունի: Հավատում ենք և Հայր Աստծուց բխող Սուրբ Հոգի Աստծուն, Կենսարարին, Հայր և Որդի Աստծու Փառակցին, որ խոսեց Մարգարեների միջոցով: Հավատում ենք նաև Մի, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական եկեղեցուն, մի մկրտության, մեղքերի թողության: Ակնկալում ենք մեռյալների հարությունը և հավիտենական կյանքը: Ամեն:

Ըստ էության նույնը պետք է ասել նաև Կ. Պոլսի 381 թ. տիեզերաժողովի կանոնական որոշումների մասին²²: Փաստական նյութը թույլ է տալիս պնդել, որ ժողովական կանոնները յուրահատուկ ձևով արտացոլում են Ալեքսանդրիա-Յոն, իսկ մյուս կողմից՝ Կ. Պոլիս-Անտիոք խմբակցությունների անհաշտ պայքարը և գործնականում հանդիսանում են առաջինների նկատմամբ երկրորդների «հաղթանակի» արտահայտությունը:

Այդ ուղղորդված քաղաքականության օրինաչափ արդյունքն է նաև Կ. Պոլսի տիեզերաժողովի չարաբաստիկ 3-րդ կանոնը, որն ընդհանրական եկեղեցու շրջանակներում նոր պառակտումների հիմք դարձավ: Նրանում մասնավորապես հռչակվում է. «Կոստանդնուպոլսի եպիսկոպոսը Յոնի եպիսկոպոսից հետո պատվի առավելություն ունի, քանի որ Կոստանդնուպոլիսը նոր Յոն է»²³: **Սա մի անառարկելի փաստ է, որը ոչ միայն վկայում է Կ. Պոլսի աթոռի «վերելքի» մասին, այլև ցույց է տալիս, որ ի հակադրություն նիկեական 6-րդ և 7-րդ կանոնների, «արևելքում (հեռահար նպատակ ունենալով նաև քրիստոնեական աշխարհում) առաջինը լինելու» իր հավակնություններում Կ. Պոլսի նվիրապետությունը վճռական փորձ է կատարում «նոր կենսագրություն հյուսել» իր համար²⁴:** Սակայն միամիտ է կարծել, թե Կ. Պոլսի հավակնությունները սահմանափակվում էին լոկ դրանով: Իրեն վերագրված կանոնական լիա-

²² Կ. Պոլսի 381 թ. տիեզերական ժողովում հաստատված կանոնների հետ կապված հիմնահարցերը ևս բանավիճային են: Պատճառն այն է, որ V-VI դարերի կանոնական ժողովածուներում հիշատակվել են Կ. Պոլսի տիեզերաժողովին վերագրվող կանոն 3 (արևմտյան տարբերակ), կանոն 4 (արևելյան տարբերակ) կանոններ: Հիմք է ընդունվել այն փաստը, որ Քաղկեդոնի ժողովում քննարկված «Synodicon Synodi secundi» վավերագրում արձանագրված է եղել Կ. Պոլսի ժողովին վերագրվող առանձին կանոնների չբաժանված միացյալ տեքստ, որում արձանագրված է միայն երեք կանոն («Synodicon Synodi secundi» վավերագրի ամբողջական տեքստը տես Sacrorum conciliorum nova amplissima collectio (ed. by **J.-D. Mansi**), T. VII, p. 445): Այնինչ XVII-XVIII դարերում կազմված տիեզերական ժողովների տարբեր գործքերում արդեն հանդիպում ենք հստակորեն տարանջատված 7 կանոնների (տես, օրինակ, *Деяния Вселенских Соборовъ*, T. I, c. 116-119):

²³ Նույն տեղում: Այս ձևակերպումը վերցված է Ժ.-Դ. Մանսիի ժողովածուում պահպանված տեքստից (տես Sacrorum conciliorum nova amplissima collectio (ed. by **J.-D. Mansi**), T. III, p. 3, հմմտ. *Деяния Вселенских Соборовъ*, T. I, c. 117): Արևելյան որոշ տեքստերում կանոնը շարադրված է միանգամայն այլ տեսքով և հռչակում է. «Կոստանդնուպոլսի եպիսկոպոսը պատվի առավելություն ունի, քանի որ Կոստանդնուպոլիսը նոր Յոն է»: Դա, անկասկած, պետք է դիտարկել Կ. Պոլսի պատրիարքության հավակնությունների համատեքստում:

²⁴ Խոսքը վերաբերում է այն բանին, որ Պողոս Կոստանդնուպոլսեցի եպիսկոպոսից հետո (340 թ.) մինչև Գրիգոր Աստվածաբանը (380 թ.), Կ. Պոլսի բոլոր եպիսկոպոսները (Եվսեբիոս Նիկոմեդացի, Մակեդոն, Եվդոկիոս, Դեմոթիլ), արիոսական համարվելով բանադրվել են եկեղեցու կողմից: 381 թ. Կ. Պոլսի տիեզերաժողովում մայրաքաղաքային նվիրապետության «անսահման գործունեությունը» ցույց է տալիս, որ նա ոչ միայն «պարտավորվեց արևելյան եպիսկոպոսների ժողովը տիեզերական հռչակել», այլև ուղղորդված այդ քաղաքականության արդյունքում կարճ ժամանակ անց՝ V դարի առաջին կեսին, «միաբնակության» մեջ անվանարկելով հակառակորդ Ալեքսանդրիայի և դաշնակից Անտիոքի նվիրապետությունները՝ առաջնություն ձեռք բերեց արևելյան եկեղեցում, տես **Сnacckii A.** *История догматических движений в эпоху Вселенских Соборов (В связи с философскими учениями того времени). Тринитарный вопрос (История учения о св. Троице)*, с. 591.

զորությունները նա կարող էր լիարժեքորեն իրականացնել միայն Ալեքսանդրիայի և Հռոմի ազդեցությունը չեզոքացնելու ճանապարհով:

Եվ դա է պատճառը, որ Կ. Պոլսի 381 թ. տիեզերաժողովի ավարտից հետո այն հանդիպեց Հռոմեական նվիրապետության և արևմտյան եպիսկոպոսական ժողովի ընդդիմությանը: Բարեբախտաբար Թեոդոսիոս կայսրը հաշվենկատ կրոնական քաղաքականությամբ կարողացավ կասեցնել քրիստոնեական արևմուտքի և արևելքի նոր պառակտումը և, թեկուզև ժամանակավոր, համերաշխություն հաստատել նվիրապետական կենտրոնների միջև:

Օգտագործելով ընձեռված հնարավորությունները՝ Թեոդոսիոս Մեծն արմատական քայլերի դիմեց նաև աստվածապետական իշխանություն հաստատելու ուղղությամբ, որի առաջին և հիմնական քայլը հանդիսացավ **Հռոմեական կայսրությունը քրիստոնեական պետության վերածելու վճռական փորձը:**

СИМВОЛ ВЕРЫ КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ВСЕЛЕНСКОГО СОБОРА 381 Г.

А. Г. Калашян

Несмотря на то, что “вселенское достоинство” Константинопольского собора 381 г., равно как и связанное с ним принятие Символа веры признается всеми церквями, однако анализ фактического материала показывает, что данный процесс признания длился много столетий.

Причин было несколько. Во-первых, хотя “Никео-Цареградский” символ признается “полным по содержанию” и “вселенским” по достоинству, однако ни Собором, ни кем-либо из его участников или современников Символ не приписывался Собору. Во-вторых, характерно и то, что Символ получил название “Никео-Цареградский” спустя много веков (лишь в VI в.). А его “правомерность” на христианском Востоке признана после Халкидонского собора, а на христианском Западе – после Трульского (681 г.) собора. И, в-третьих, канонические постановления Собора получили “вселенское признание” лишь в V в.

SYMBOL OF FAITH OF THE CONSTANTINOPLE COUNCIL 381

A. G. Kalashyan

Although all the Churches accept both the “universal rank” and the symbol of Faith of the Constantinople Council in 381 the analysis of the factual material shows that the process of the acknowledgment lasted centuries.

There were several reasons. Firstly, though the “Nicene- Imperial” symbol was acknowledged “complete due to the content” and “universal due to the value” neither the Council nor a contemporary or a participant ascribed that symbol to the Council itself. Secondly, it is the fact that the symbol acquired the name of “Nicene- Imperial” many centuries later and that was in the VI century. Its “legality” was adopted in the Christian East only after Chalcedon Council and in the Christian West- only after Trul Council (681). Thirdly, the canonic resolutions of the Council acquired “universal acknowledgment” only in the V century.